Հայոց լեզվի օլիմպիադայի մարզային փուլի
Պատասխաններ՝ 9-րդ դասարան

1. Հելլադայում սիրված աստվածուհիներից էր Արտեմիսը, **ում** պաշտամունքը **գնալով** տարածվեց ու հասավ մինչև Փոքր Ասիա: Արտեմիսը Հունաստանում որսի **աստվածուհին** էր, իսկ Եփեսոսում՝ պտղաբերության խորհրդանիշը: Եփեսոսցիները, ի պատիվ Օլիմպոսի դիցուհու, քաղաքի բարձրադիր հատվածում կառուցեցին շքեղ մի տաճար:

Հրաշագեղ շինությունը՝ կառուցված գրեթե հարյուր տարում, դարձավ հեթանոսական պաշտամունքի կենտրոն: Իր **շքեղությամբ** ապշեցնող կառույցը դեպի իրեն էր ձգում հազարավոր զբոսաշրջիկների. **այն** իր տեսակի մեջ եզակի էր, նմանը չունեցող: Թվում էր՝ մարմարե շինվածքը **հավերժությանն** էր պատկանելու, և մարդկությունը մշտապես ըմբոշխնելու էր այդ գեղեցկությունը, բայց կանգուն մնաց ընդամենը հարյուր տարի:

Մի օր ցնցվեց ողջ Հունաստանը, երբ լսեց տաճարի կործանման ահասարսուռ լուրը: Պարզվեց՝ Եփեսոսի բնակիչներից մեկը՝ ոմն **Հերոստրատ,** իր անունը դարերի հոլովույթում անմահացնելու համար այրել էր Արտեմիսին նվիրված հրաշակերտ կառույցը:

Սուգ հագավ Եփեսոսը ու խոր ցավից կծկվելով՝ ասես քարացավ: Սակայն երբ քաղաքի բնակիչները սթափվեցին ծանր **մղձավանջից,** առաջին հերթին մտածեցին՝ ինչ պատիժ սահմանեն այդ ողորմելի մարդուկի համար: Ու որոշում կայացրին՝ մեկընդմիշտ մոռանան և արգելեն որևէ տեղ հիշատակել ոճրագործի **անունը.** թող անկատար մնա նրա դարերում հավերժելու փափագը:

Սակայն Հին աշխարհի **որոշ** հեղինակների՝ այդ աններելի արարքի մասին իրենց մատյաններում գրի առնելը, ցավոք, նպաստեց փոքրոգի մահկանացուի ցանկությունն իրականացնելուն:

2. **իր անունը դարերի հոլովույթում անմահացնելու համար** –նպատակի պարագա,
խոր ցավից կծկվելով-պատճառի պարագա,
որևէ տեղ հիշատակել-ուղիղ խնդիր
դարերում հավերժելու- *որոշիչ*
այդ աններելի արարքի մասին իրենց մատյաններում գրի առնելը - ենթակա
փոքրոգի մահկանացուի ցանկությունն իրականացնելուն - հանգման խնդիր
3. **ում**- հատկացուցիչ, **գնալով** - ձևի պարագա, **աստվածուհին**- ստորոգելի, **շքեղությամբ**- միջոցի խնդիր, **հավերժությանը**- հանգման խնդիր, **մղձավանջից**- անջատման խնդիր, **այն**- ենթակա, **Հերոստրատ**-բացահայտիչ, **ոճրագործին** -ուղիղ խնդիր, **որոշ**-որոշիչ:
4. **մինչև** - կապ, շաղկապ, **իսկ**- շաղկապ, վեր., **ասես**- վեր., բայ, **թող**- վեր., բայ,
սակայն- շաղկապ, վեր.
6.**բաղադրյալ**- աստվածուհին էր, եզակի էր և այլն, **պարզ**- տարածվեց, հասավ, այրել էր և այլն
7. **վեհերոտ**- վախկոտ, **անտերունչ**-անտեր, բարձիթողի, **տորմիղ**-նավերի խումբ,
պարարտ- գեր, արգավանդ, լի, լեցուն, առատ, հարուստ և այլն, **շաղակրատ**- շատախոս,
անջրդի-անջուր, չոռոգվող, անմշակ, **մույթ**-հենասյուն, հենարան, **երամակ**-ձիերի խումբ,
քենակալ-կնոջ քրոջ՝ քենու ամուսինը, **աչառու**-կողմնակալ, անարդար
8. **անարգանքի սյունին գամել**– պարսավել, դատապարտել, խիստ քննադատել և այլն
պղտոր ջրում ձուկ որսալ-խառնաշփոթությունից, իրարանցումից օգուտ քաղել անձնական շահի համար,
սայլը տեղից շարժել-գործն առաջ տանել,
կառքի հինգերորդ անիվ- անպետք՝ միանգամայն ավելորդ իր,
օձը բնից հանել- ճարտար լեզվով համոզել, թովել, հրապուրել, դյութել

Հայոց լեզվի օլիմպիադայի մարզային փուլի

Գնահատման չափանիշներ՝ 9-րդ դասարան

Ամբողջ հարցաշարին տրվում է 50 միավոր, որից՝

1. Բնագրի ճիշտ կետադրության համար տրվում է 7 միավոր:
   Յուրաքանչյուր կետադրական ոչ ճիշտ նշանի համար հանվում է 0,5 միավոր:
2. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան՝ 1, ընդհանուր՝ 6 միավոր
Դերբայական դարձվածը՝ 0,5, շարահյուս. պաշտոնը՝ 0,5
3. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան՝ 0,5, ընդհանուր՝ 5 միավոր
4. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան՝ 1, ընդհանուր՝ 5 միավոր
   Յուրաքանչյուր բառի մեկ խոսքի մասը նշելը՝ 0,5, երկուսը՝ 1
5. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան՝ 1, ընդհանուր՝ 5 միավոր
6. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան՝ 0,5, ընդհանուր՝ 2 միավոր
7. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան՝ 0,5, ընդհանուր՝ 5 միավոր
8. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան՝ 1, ընդհանուր՝ 5 միավոր

9. Շարադրությանը տրվում է 10 միավոր: Ուղղագրական յուրաքանչյուր սխալի համար հանվում է 1 միավոր, կետադրականի համար՝ 0,5, քերականական, ոճական և տողադարձի սխալներից յուրաքանչյուրի համար՝ 0,25 միավոր:

Բոլոր առաջադրանքների ուղղագրական յուրաքանչյուր սխալի համար հանվում է 1 միավոր, կետադրականի համար՝ 0,5 միավոր, քերականական, ոճական և տողադարձի սխալներից յուրաքանչյուրի համար՝ 0,25 միավոր: